Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ԹԻՒ 21.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

# ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

## ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՑՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԱՌԱՋԻՆ

9 Ապրիլ 1871




ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԻՒՀԵՆՏԻՍԵԱՆ

— 1871 —

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

### ԲԱՑՈՒՄ 1871 ԱՄԻՆ

## ՆԻՍՏ Ա.

9 ԱՊՐԻԼ 1871.

ՆԱԽԱԳԱՀ. — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ

ԱՏԵՆԱՊԵՏ. — Գ. ՕՏԵԱՆ ԷՖԷՆՏԻ

## ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

1° Ընդունելութիւն ատենագրութեանց ԺԸ. ԺԹ. եւ Ի. նիստերուն.
2° Ատենական կանոնագրութիւն ։
3° Վերաքննութիւն Սահմանադրութեան ։

Ատեան բանալու որոշեալ ժամն անցած եւ դեռ եւս մեծագոյն մաս գոյացած չըլլալով, Ատենապետ էֆ. նախընթաց երեք նիստերու ատենագրութեանց վրայ դիտողութիւնները լսելու համար ատեանը կը բանայ, անոնց վաւերացումը մեծագոյն մասի ներկայութեան թողելու պայմանաւ ։

Ներկայ երեսփոխանաց թիւն էր 40, որ վերջապէս 73ի յանգեցաւ ։

Ատենապետ էֆ. նախապէս դիտողութեան դրաւ ԺԸ. նիստին ատենագրութիւնը ։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — ԺԸ. նիստ, երես 263 առաջին սիւնակին մէջ Նախագահ Սրբազանէն ետքը անմիջապէս խօսք ուզեցի պատասխանելու Սրբազանին այն հարցման որ առ իս ուղղեալ էր թէ՝ «ո՞րչափ ատեն սահմանուած է «ինձ Ազգին Պատրիարքութիւն ընելու»։ Ատենապետ էֆ-էն խօսք ուզեցի «Սրբազանին պիտի պատասխանեմ» ըսելով, բայց Ատենապետ էֆ. «պատասխան չը կայ» ըսելով խօսք չը տուաւ ։ Այս մասը արձանագրուած չըլլալուն կարեւոր համարեցայ սոյն դիտողութիւնն ընել, զի Սրբազանին հարցման երկու բառով պիտի պատասխանէի ։

ՊԷԿԵԱՆ Թ. ԷՖ. — ԺԸ. նիստի ատենագրութեան 266 երեսին մէջ ես իբր թէ ըսած ըլլամ, «Ընդհանուր ժողովը չը կրնար թոյլ տալ որ օրինաւորութենէ դուրս տուրք հաւաքվի». բայց ես այդպէս չը խօսեցայ, այլ որովհետեւ խնդիր ծագած էր այն միջոցին թէ Ազգ. Վարչութիւնը պէտք չէ ու չը կրնար արտաքոյ կարգի հաւաքում ընել, ըսի թէ՝ «գործադիր իշխանութիւն մը հարկադրական պարագայի մէջ կրնայ իր սովորական պիտոյից չափովը առ ժամանակեայ հաւաքում մը կամ փոխառութիւն մ'ընել, պատասխանատու մնալով միշտ Ընդհ. Ժողովոյ. սակայն Ընդհ. Ժողովը պէտք չէ որ Սահմանադրութենէն դուրս հաւաքում մ'ընել որոշէ, այլ թողու որ Ազգ. Վարչութիւնը հարկադրական պարագայի մէջ ունեցած ձեռնհասութեամբը արժան դատած եղանակովը դարման տանի իւր պիտոյիցը»։

Ուրիշ դիտողութիւն չըլլալով, կարգն եկաւ ԺԹ. նիստի ատենագրութեան ։

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

---

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՄՆՏՈՒԿԻՆ

---

'Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի, եւ կըգտուի ամէն գրավաճառաց քով և եկեղեցեաց բանկաները։